ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք. Սևան, Գործարանային 8ա հեռ. (0261) 2-02-33

05.09.2012թ.

2033-Ք-4785/12

հայցվոր <u>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին</u>
/հասցե՝ ք. Գավառ, Գ.բ. Լուսավորչի 36/

պատասխանողներ - <u>Գևորգ Թովմասյանին</u>
/հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծովագյուղ/

<u>Վահրամ Գևորգյանին</u>
/հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծովագյուղ/

Կից Ձեզ է ուղարկվում ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 04.09.2012թ. թիվ ԳԴ4/0201/02/12 վճիռը 4 /չորս/ թերթից:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

10 ... թիվ 4687-12
09 12

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

04.09.2012թ. ք. Սևան

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով.

նախագահությամբ՝ դատավոր Ա.Գաբրիելյանի,
քարտուղարությամբ՝ Ն.Անտոնյանի,

մասնակցությամբ՝
հայցվոր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի,
/ներկայացուցիչ՝ Ն.Ղազարյան/

պատասխանող Վ.Գևորգյանի,

դռնբաց դատական նիստում 2012 թվականի օգոստոսի 27-ին, քննության առնելով քաղաքացիական գործն՝ ըստ հայցի ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ընդդեմ Գևորգ Վահագնի Թովմասյանի և Վահրամ Աբրահամի Գևորգյանի (անձնագրի համարը՝ AM 0452398)՝ հօգուտ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1

Գործի դատավարական նախապատմությունը

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը 29.05.2012թ. հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Գևորգ Թովմասյանի և Վահրամ Գևորգյանի՝ հօգուտ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին, որը ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 31.05.2012թ. թիվ ԳԴ4/0201/02/12 որոշմամբ ընդունվել է վարույթ:

Նույն դատարանի 25.06.2012 թվականի թիվ ԳԴ4/0201/02/12 որոշմամբ քաղաքացիական գործով նշանակվել է նախնական դատական նիստ 2012 թվականի հուլիսի 9-ին ժամը 11^{30}-ին:

Հայցադիմումի հիմքերը, հայցվորի փաստարկները և պահանջը

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնել է, որ 2011թ. ապրիլի 29-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը, գործելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության անունից, ի դեմս՝ տնօրեն Վ.Վարդանյանի, մի կողմից և ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ն.Պողոսյանի միջև կնքվել է փոխառության թիվ 17 պայմանագիրը, համաձայն որի ՀՀ կառավարության 2011թ. մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում 2011թ. գարնանացան գարու սերմնարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 330-Ն և 2011թ. փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետությունում 2011թ. գարնանացան գարու սերմնարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և սերմերի ներմուծումը թույլատրելու մասին» թիվ 279-Ն որոշումների, փոխառուին է հանձնվել տեխնիկական բնութագրերով նախատեսված գրանցված

գարու էլիտային սերմացու՝ մարզի գյուղատնտեսական տնտեսություններում գարու վերարտադրություն կազմակերպելու նպատակով, տրված քանակությունը համարժեք 1:1 հարաբերակցությամբ 1կգ-ի համար 100 ՀՀ դրամ գումարը մինչև տարեվերջ ետ վերադարձնելու պայմանով: Փոխառուի կողմից գարնանացան գարու էլիտային սերմացու ձեռք բերելուց հետո, այն մարզի գյուղատնտեսական տնտեսություններին հատկացնելու և վերարտադրություն կազմակերպելու նպատակով 2011թ. ապրիլի 29-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ն.Պողոսյանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-886 հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կանոնադրությունը, փոխառության եռակողմ պայմանագիր է կնքել Ծովագյուղ համայնքի ղեկավար Գևորգ Թովմասյանի և նույն գյուղի բնակիչ Վահրամ Աբրահամի Գևորգյանի հետ, համաձայն որի փոխառուն փոխառուին է հանձնել տեխնիկական բնութագրերով նախատեսված որակի գարնանացան գարու էլիտային 1650 կգ սերմացու՝ գարու վերարտադրություն կազմակերպելու նպատակով:

Համաձայն պայմանագրի 2.1 կետի՝ փոխառուին՝ Վ.Գևորգյանին, գարու էլիտային սերմացուն տրամադրվել է տրված քանակությանը /1650կգ/ համարժեք 1:1 հարաբերակցությամբ՝ 1 կգ-ի համար 100 ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր գումարը կազմում է 165000 ՀՀ դրամ, մինչև տարեվերջ ետ վերադարձնելու պայմանով:

Համաձայն պայմանագրի 3.4.3 կետի՝ գարու սերմացուի գումարը փոխառուն՝ սույն գործով պատասխանող կողմը, պարտավոր էր սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված ժամկետում փոխանցել «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում բացված նպատակային 1930005627050300 հաշվեհամարին: Պայմանագրով նախատեսված ժամկետից անցել է շուրջ հինգ ամիս, սակայն փոխառուն հրաժարվում է նշված գումարը ետ վերադարձնելուց: Այսպիսով պատասխանողների կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ և 880-րդ հոդվածի 1-ին մասի և սույն պայմանագրով նախատեսված պահանջները և պայմանները:

Վերոգրյալի հիման վրա խնդրել է համապատասխանողներ Գևորգ Թովմասյանից և Վահրամ Գևորգյանից համապարտության կարգով հօգուտ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի /հ/հ 1930005627050300/ բռնագանձել 165.000 ՀՀ դրամ:

Նախնական դատական նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցիչը դատարանին հայտնեց, որ կողմերի միջև 20.08.2012 թվականին կնքվել է հաշտության համաձայնագիր, իրեն պարզ է դրա դատավարական հետևանքները, միջնորդեց հաշտության համաձայնագիրը հաստատել և քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Պատասխանողի իրավական դիրքորոշումը

Պատասխանող Վ.Գևորգյանը, չառարկելով հայցվորի միջնորդության դեմ, հայտնեց, որ ինքը կողմ է հաշտության համաձայնությանն, իրեն պարզ է հաշտության համաձայնության դատավարական հետևանքները և նույնպես խնդրեց այն հաստատել:

Պատասխանող Գ.Թովմասյանը, պատշաճ կարգով ծանուցված լինելով դատական նիստի տեղի և ժամանակի մասին, դատարան չի ներկայացել:

II

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

1. Կողմերի միջև 2012 թվականի օգոստոսի 20-ին կնքվել է հաշտության համաձայնություն, որը չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

Դատարանի կողմից հաստատված հանգամանքները, իրավական վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրահանգումը

Դատարանը, լսելով գործին մասնակցող անձանց կարծիքները, [illegible] ներկայացված հաշտության համաձայնությանը, քննարկելով այն հանգամանքները, գործի

վարույթը կարճելու վերաբերյալ կողմերի միջնորդությունը, եկավ այն համոզման, որ միջնորդությունն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանը հաստատված համարեց այն հանգամանքները, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և պատասխանողներ Գևորգ Թովմասյանի, Վահրամ Գրիգորյանի միջև 20.08.2012 թվականին կնքվել է հաշտության համաձայնագիր, որը չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածը կողմերին իրավունք է վերապահում դատավարության ցանկացած փուլում կնքել հաշտության գրավոր համաձայնություն, ինչը և արվել է.

20.08.2012 թվականին կողմերի ազատ կամահայտնությամբ կազմվել և պատշաճ վավերացվել է վեճի առարկա հանդիսացող խնդրի փոխհամաձայնեցված կարգավորման վերաբերյալ փաստաթուղթ, որը համապատասխանում է ներկայացվող պահանջներին, չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Հետևաբար, կողմերի միջև 20.08.2012 թվականին կնքված հաշտության համաձայնագիրն ենթակա է հաստատման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ, 109-րդ հոդվածի 7-րդ կետով, 110-րդ, 130-133-րդ հոդվածներով դատարանը՝

Վ Ճ Ռ Ե Ց

Հաստատել քաղաքացիական գործով՝ ըստ հայցի ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ընդդեմ Գևորգ Վահագնի Թովմասյանի և Վահրամ Աբրահամի Գևորգյանի՝ հօգուտ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին, կողմերի միջև 20.08.2012 թվականին կնքված հաշտության համաձայնությունը հետևյալ շարադրանքով.

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

20 օգոստոսի 2012թ. ք.Գավառ

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի /ք.Սևան/ վարույթում գտնվող թիվ ԳԴ4/0201/02/12 քաղաքացիական գործի կողմերը՝ հայցվոր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, պատասխանողներ Ծովագյուղ համայնքի ղեկավար Գևորգ Թովմասյանը և նույն գյուղի բնակիչ Վահրամ Աբրահամի Գևորգյանը կնքում են սույն հաշտության համաձայնագիրը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հայցապահանջն ընդդեմ Ծովագյուղ համայնքի ղեկավար Գևորգ Թովմասյանի և նույն գյուղի բնակիչ Վահրամ Աբրահամի Գևորգյանի, մեկ հարյուր վաթսունհինգ հազար ՀՀ դրամ հօգուտ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի բռնագանձելու պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործի շրջանակում:

Համաձայնագրի կողմերը կնքում են սույն հաշտությունը հետևյալի մասին՝

1. Գործով պատասխանողներս Գևորգ Թովմասյանս և Վահրամ Աբրահամի Գևորգյանս պարտավորվում ենք համաձայն գործում առկա փոխառության պայմանագրի մինչև 2013թ. ապրիլ ամսվա 30-ը հօգուտ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի հ/հ 1930005627050300 վճարել մեկ հարյուր վաթսունհինգ հազար ՀՀ դրամ:
2. Նշված ժամանակաշրջանում պայմանագրով նախատեսված և համաձայն հաշտության համաձայնագրի պարտականությունները չկատարելու դեպքում վերը նշված գումարի բռնագանձումը կատարել ԴԱՀԿ ծառայության միջոցով:
3. Հաշտության համաձայնագիրը կազմված է չորս օրինակից՝ կողմերից յուրաքանչյուրին մեկական օրինակ և մեկ օրինակը ներկայացնել դատարանին գործով բնօրինակի նպատակով:

Հաշտության համաձայնագրի կողմերը

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռ.Գրիգորյան ստորագրություն կլոր կնիք	Ծովագյուղ համայնքի ղեկավար Գ.Թովմասյան ստորագրություն կլոր կնիք	Ծովագյուղ համայնքի բնակիչ անձն. AM 0452398 Վահրամ Գևորգյան ստորագրություն

Սույն քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ծանոթություն. Վճիռը սահմանված ժամկետում չի բողոքարկվել և ուժի մեջ է մտել է օրինական ուժ:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ՀՀ ք.Մեծ Նաիրյան 1-ին նրբ. շ.13 Հեռ. 0261 2 21 50

№ Ե-3795-05

„31" 05 2013թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ք. Գավառ, Գ. Լուսավորիչի 36

ՊԱՏՃԵՆԸ՝ ՔԱՂ-ՑԻ ԳԵՎՈՐԳ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ
Գեղարքունիքի մարզ գյուղ Ծովագյուղ

Ուղարկվում են ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Ալեքսանդր Մնացականյանի կողմից կայացված կատարողական վարույթ հարուցելու, պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու, գույքի նկատմամբ հետաքննություն հայտարարելու և կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշումները:
Լոգիր՝ 4 թերթ

/ԲԱԺՆԻ ՊԵՏ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴՊԵՏ Լ.ԱՐՏԱՇԵՍՅԱՆ

Կատ.Ալ. Մնացականյան /0261-2-21-50/
կ/վ 05-1080/13

Գեղարքունիքի մարզպետարան
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԹՎԱԿԱՆ
07 06 2013
Մուտքագրման թիվ 3517-13

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Կատարողական վարույթ հարուցելու մասին

30.05.2013թ. ք. Սևան

ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան՝ Ալեքսանդր Մնացականյանս ուսումնասիրելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռ. Գրիգորյանի (30.05.2013թ-ին տրված թիվ Ի/թ-978-05) գրությունը և քննարկելով ՀՀ քաղաքացիական իրավասության դատարանի կողմից 04.10.2012թ. տրված թիվ ԴԴ4/0201/02/12 կատարողական թերթը՝

Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն

ՀՀ քաղաքացիական իրավասության դատարանի կողմից 04.10.2012թ. տրված թիվ ԴԴ4/0201/02/12 կատարողական թերթի համաձայն պետք է Գևորգ Թովասյանից հօգուտ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի բռնագանձել 165000 դրամ գումար

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 66 և 67 հոդվածների համաձայն պարտապանից հօգուտ ԴԱՀԿ ծառայության պետք է բռնագանձել 8250 ՀՀ դրամ, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման» մասին ՀՀ օրենքի 28, 30 և 67 հոդվածով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հարուցել կատարողական վարույթ թիվ 05-1080/13 Գևորգ Թովասյանից հօգուտ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի 165000 դրամ, ինչպես նաև հօգուտ ԴԱՀԿ ծառայության 8250 ՀՀ դրամ, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս բռնագանձելու մասին:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ՄԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱՆ ԱԼ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին

30.05.2013թ.

ք. Սևան

ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան՝ Ալեքսանդր Մնացականյանս, ուսումնասիրելով 30.05.2013թ. հարուցված թիվ 05-1080/13 կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.10.2012թ. տրված թիվ ԳԴ4/0201/02/12 կատարողական թերթի համաձայն պետք է Գևորգ Թովմասյանից հօգուտ «Սերմերի փորձակայություն» ՊՈԱԿ-ի բռնագանձել 165000 դրամ գումար

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 66 և 67 հոդվածների համաձայն պարտապանից հօգուտ ԴԱՀԿ ծառայության պետք է բռնագանձել 8250 ՀՀ դրամ, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 և 44 հոդվածի 4-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

Արգելանք դնել պարտապան՝ Գևորգ Թովմասյանին (հասցեն ըստ կատարողական թերթի՝ Գեղարքունիքի մարզ գյուղ Ծովագյուղ) պատկանող շարժական և անշարժ գույքի վրա:

Նրան արգելել որևէ գործարք կնքել արգելադրված գույքի նկատմամբ:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱՆ

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին

30.05.2013թ.

ք. Սևան

ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, սպայական կապիտան՝ Ալեքսանդր Մնացականյանս, ուսումնասիրելով 30.05.2013թ. հարուցված թիվ 05-1080/13 կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ քաղաքացիական իրավասության դատարանի կողմից 04.10.2012թ. տրված թիվ ԳԴ4/0201/02/12 կատարողական թերթի համաձայն պետք է Գևորգ Թոփչայանից հօգուտ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի բռնագանձել 165000 դրամ գումար

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 66 և 67 հոդվածների համաձայն պարտապանից հօգուտ ԴԱՀԿ ծառայության պետք է բռնագանձել 8250 ՀՀ դրամ, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 28, 43, 56 և 67 հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Արգելանք դնել պարտապան՝ Գևորգ Թոփմասյանի (հասցեն ըստ կատարողական թերթի՝ Գեղարքունիքի մարզ գյուղ Ծովագյուղ) դրամական միջոցների վրա 173250 ՀՀ դրամի չափով, որից 165000 ՀՀ դրամը՝ որպես կատարողական թերթով նախատեսված բռնագանձման ենթակա գումար, 8250 ՀՀ դրամը՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԱՎԱԳ. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ՄԱՐԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱՆ

ԱԼ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ